ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -296-2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«20» «08» 2025 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը (այսուհետև՝ որոշում)՝ որոշման «1196.Մարզերի մշակութային զարգացման ծրագիր» ծրագրի «11001. Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» միջոցառման (տող՝ «Ֆեստիվառ» փառատոն) (այսուհետև՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կազմակերպել «Ֆեստիվառ» փառատոնի իրականացումը (այսուհետև՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2,

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունները անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառումների իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ սույն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձի միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանվա պահանջներին,
2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքու դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,
2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումներ ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքու պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,
2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելո դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝
2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,
2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,
2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվու նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:
2.3. Պետական մարմինը պարտավոր է՝
2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,
2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:
2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,
2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,
2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,
2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,
2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,
2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,
2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,
2.4.10. իրականացնել ծրագրի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, համերգային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել

ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել պետական մարմնի մասնակցության ձևաչափը (պետական մարմնի ֆինանսավորմամբ, պետական մարմնի աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառման համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է 311785,9 հազար (երեք հարյուր չորս միլիոն չորս հարյուր քսանինը հազար ինը հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի,

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2025 թ. սեպտեմբերի 22-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացույցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2025 թվականի օգոստոսի 7-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն

պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
Կառավարական տուն N 2	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
հ/հ 900011039097, հվհհ 02698732	Հեռ. 093072266, 098018834
Գլխավոր քարտուղար՝	Գործադիր տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան	_____ Հ. Մովսիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«20» «08» 2025 թ.
N ՄՇԴ-296-2025 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ֆեստիվառ» փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
3	Ծրագրի անվանում	«Ֆեստիվառ» փառատոն
3.1	Բովանդակություն	Առաջին ալիքը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Արարատի, Կոտայքի և Արմավիրի մարզերում կազմակերպում է երաժշտական մեծ փառատոն: «Ֆեստիվառ» փառատոնի հյուրերը Հրազդանում, Արմավիրում և Արտաշատում հնարավորություն կունենան համտեսել տեղական արտադրանքը, այցելել թաքնված ու հայտնի անկյունները և վայելել համերգային ծրագիրը: «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի առաջին համերգը Արարատի մարզի Արտաշատ քաղաքում է, որտեղ համերգային ծրագրով հանդես կգա սիրված երգիչ Սարոն՝ «Կարեն և Սևակ» բենդի հետ միասին: «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի երկրորդ կանգառը Հրազդանն է, որտեղ համերգային ծրագրով հանդես կգա հայ սիրված երգիչ Հարութ Փամբուկչյանը՝ «Կարեն և Սևակ» բենդի հետ միասին: «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի վերջին՝ երրորդ կանգառը Արմավիրն է, որտեղ՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրը՝ Սեպտեմբերի 21-ին, համերգային ծրագրով հանդես կգա Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, հայկական էստրադայի սիրված երգիչների հետ միասին՝ Իվետա Մուկուչյան, Էրիկ, «Գարիկ-Սոնա» բենդ, «Ռեինկարնացիա» օրկեստրա, Ժակո («Լադանիվա»), Բրյունետ, «Նեմրա», Մաշա Մնջոյան, Խորեն Լևոնյան...
3.2	Նպատակ	Փառատոնի նպատակը մշակութային միջոցառումների ապակենտրոնացումն է, մարզերում զբոսաշրջային

		ակտիվության խթանումը և տեղի արտադրողների հանրահռչակումը:
3.3	Անցկացման ժամկետ	2025 թ. օգոստոսի 23 սեպտեմբերի 13 սեպտեմբերի 21
3.4	Անցկացման վայր	ՀՀ, Արարատ մարզ, ք.Արտաշատ, ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Հրազդան, ՀՀ, Արմավիր մարզ, ք. Արմավիր
3.5	Ակնկալվող արդյունքներ	Փառատոնի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային կյանքի աշխուժացում, զբոսաշրջային հոսքերի ներգրավում մարզերում, տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկացվածության բարձրացրում, ՓՄՁ գործունեության խթանում, նոր գործարար կապերի հաստատում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	3 համերգ, 55 000 հանդիսատես

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039097, հվհհ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
Հեռ. 093072266, 098018834

Գործադիր տնօրեն՝
_____ Հ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ. S.

Հավելված N 2
«20» «03» 2025 թ.
N ՄՇԴ-296-2025 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
«Ֆեստիվառ» երաժշտական փառատոնի կազմակերպման ծախսերի

NN	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
	I.Համերգային նախագիծ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում				**67,261.3**
1	**Ստեղծագործական անձնակազմի ծառայություններ**				**21,544.4**
1.1	Երաժշտախմբի ելույթի ապահովում («Կարեն և Սևակ» բենդ, 13 երաժիշտ, 4 բեք վոկալ)	հատ	1	10,000,000	10,000.0
1.2	Երգիչ	հատ	1	10,044,444	10,044.4
1.3	Բեմադրող ռեժիսոր	հատ	1	1,100,000	1,100.0
1.4	DJ ծառայություն (ներառյալ տեղափոխման գծով տրանսպորտային ծախսեր)	հատ	1	400,000	400.0
2	**LED էկրանի, լուսային սարքավորումների,ձայնային ապահովման, կոնստրուկցիաների, բեմի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի ծառայություններ**				**35,111.3**
2.1	*ԼԷԴ էկրան* Լեդ էկրան 3.9 մմ կետայնությամբ, նախատեսված դրսում աշխատելու համար՝ 112 քմ, Լեդ էկրանների կառավարման համակարգ Comander 4k՝ 1 հատ	հատ	1	5,636,400	5,636.4
2.2	*Ձայնային սարքավորումներ* Ձայնային համակարգ Sound System Mayer sound Lion՝ 24 հատ, ձայնային համակարգ Sound sysytem Mayer sound HP 700՝ 12 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson S10՝ 16 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson M212՝ 24 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson Point 12՝ 16 հատ, կիթառի համար նախատեսված բարձրախոս guitar cube՝ 2 հատ, ձայնի կառավարման համակարգ Sound Mixer Alen&Heat Dlive S5000՝ 2 հատ, ձայնային սարքավորման լրակազմ Sound backline՝ 1 հատ, խոսափողների լրակազմ՝ 1	հատ	1	12,327,400	12,327.4
2.3	*Լուսային սարքավորումներ* լուսատու սարք, Fineart Fine 2000L spot - 8 հատ, լ սարք Fineart Fine 450 Beam - 28 հատ, լուսատու սարք Fineart Fine 1200C strobe - 28 հատ, լոսատու սարք LightSky Pearl Wash - 48 հատ, լուսատու սարք PR lighting Led bar RGBW - 48 հատ, լուսատու սարք PR lighting Xled 2007 - 52 հատ, լուսատու սարք Willeda COB blinder 150 ww - 48 հատ, լույսերի կառավարման համակարգ Light control MA2 Full size - 1 հատ, լույսերի կառավարման համակարգի արտաքին սարք MA NPU - 1 հատ, ծխի ապարատ - 4 հատ	հատ	1	5,413,800	5,413.8
2.4	*Ալյումինե կոնստրուկցիաներ* Ալյումինե կոնստրուկցիա ծածկով 14*12*8.5 - 1 հատ, Բեմի մոդուլներ - 180 քմ, Էլեկտրական ճախարակ Chain hoists (motor)-24 հատ, ալյումինե կոնստրուկցիայի լրակազմ՝ 1 հատ	հատ	1	8,293,660	8,293.7

2.5	Տեխնիկական սարքավորումների տեղափոխում՝ Երևան-Արտաշատ-Երևան, ամբարձիչով մեծ բեռնատար տրանսպորտային միջոց, առնվազն 18 տ տարողությամբ, 4 բեռնատար, 2 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	8	250,000	2,000.0
2.6	Տեխնիկական սպասարկող անձնակազմի տեղափոխում՝ նախատեսված միջինը 30 անձի տեղափոխության համար, 6 մարդատար մեքենա, 6 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	36	15,000	540.0
2.7	Տեխնիկական սպասարկող անձնակազմի սննդի ապահովում, միջինը 30 մարդ, 6 օր	մարդ/օր	180	5,000	900.0
3	**Նկարահանման հատուկ տեխնիկայի ապահովում և սպասարկում** Տեսախցիկների լրակազմ՝ 15 հատ, եռոտանի՝ 12 հատ, օբյեկտիվ՝ 15 հատ, հեռուստատեսային ռելս՝ 1 հատ, ռոնին՝ 2 հատ, հեռուստատեսային կռունկ՝ 1 հատ, նկարահանող սարք (սարդ)՝ 1 հատ, մոնիտոր՝ 9 հատ, FPV դրոն՝ 1 հատ, ներքին կապի համակարգ՝ 1 հատ, ֆոկուս ֆոլոու՝ 2 հատ	հատ	1	1,800,000	**1,800.0**
4	LED էկրաններին ցուցադրելու համար թեմատիկ կոնտենտի պատրաստում	հատ	1	888,888	**888.9**
5	Բրենդավորում (բեմի բաներներով ու սև կտորով քողարկման համար)	հատ	1	6,000,000	**6,000.0**
6	Բեմական հատուկ էֆեկտների ապահովում	հատ	1	1,666,667	**1,666.7**
7	Ստեղծագործական անձնակազմի սննդի ապահովում՝ միջինը 25 մարդ, 2 օր	մարդ/օր	50	5,000	**250.0**
	II. Համերգային նախագիծ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում				**71,842.4**
1	**Ստեղծագործական անձնակազմի ծառայություններ**				**31,348.1**
1.1	Երաժշտախմբի ելույթի ապահովում («Կարեն և Սևակ» բենդ, 13 երաժիշտ, 4 բեք վոկալ)	հատ	1	10,000,000	10,000.0
1.2	Երգչի վարձատրություն, ներառյալ երգչի ու մենեջերի ավիատոմսի արժեքը («Լոս Անջելես Թի Վի Ներթվորք» ԻՆՔ. Ընկերություն)	հատ	1	19,848,075	19,848.1
1.3	Բեմադրող ռեժիսոր	հատ	1	1,100,000	1,100.0
1.4	DJ ծառայություն (ներառյալ տեղափոխման գծով տրանսպորտային ծախսեր)	հատ	1	400,000	400.0
2	**LED էկրանի, լուսային սարքավորումների, ձայնային ապահովման, կոնստրուկցիաների, բեմի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի ծառայություններ**				**35,444.4**
2.1	*ԼԷԴ էկրան* Լեդ էկրան 3.9 մմ կետայնությամբ, նախատեսված դրսում աշխատելու համար՝ 112 քմ, լեդ էկրանների կառավարման համակարգ Comander 4k՝ 1 հատ	հատ	1	5,636,000	5,636.0
2.2	*Ձայնային սարքավորումներ* ձայնային համակարգ Sound System Mayer sound Lion՝ 24 հատ, ձայնային համակարգ Sound sysytem Mayer sound HP 700՝ 14 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson S10՝ 24 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson M212՝ 24 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson Point 12՝ 16 հատ, կիթառի համար նախատեսված բարձրախոս guitar cube՝ 2 հատ, ձայնի կառավարման համակարգ Sound Mixer Alen&Heat Dlive S5000՝ 2 հատ, ձայնային սարքավորման լրակազմ Sound backline՝ 1 հատ, խոսափողերի լրակազմ՝ 1 հատ	հատ	1	12,546,900	12,546.9

2.3	*Լուսային սարքավորումներ* լուսատու սարք, Fineart Fine 2000L spot՝ 8 հատ, լուսատու սարք Fineart Fine 450 Beam՝ 28 հատ, լուսատու սարք Fineart Fine 1200C strobe՝ 28 հատ, լոսատու սարք LightSky Pearl Wash՝ 48հատ, լուսատու սարք PR lighting Led bar RGBW - 48 հատ, լուսատու սարք PR lighting Xled 2007՝ 48 հատ, լուսատու սարք Willeda COB blinder 150 ww՝ 52 հատ, լույսերի կառավարման համակարգ Light control MA2 Full size՝ 1 հատ, լույսերի կառավարման համակարգի արտաքին սարք MA NPU՝ 2 հատ, ծխի ապարատ՝ 4 հատ	հատ	1	5,413,800	5,413.8
2.4	*Ալյումինե կոնստրուկցիաներ* ալյումինե կոնստրուկցիա ծածկով, 14*12*8.5՝ 1 հատ, բեմի մոդուլներ՝ 180 քմ, էեկտրական ճախարակ Chain hoists (motor)՝ 32 հատ, ալյումինե կոնստրուկցիայի լրակազմ՝ 1 հատ, ծանրոցներ՝ անվտանգության և հավասարակշռության համար՝ 26 հատ	հատ	1	8,293,660	8,293.7
2.5	Տեխնիկական սարքավորումների տեղափոխում՝ Երևան-Հրազդան-Երևան, ամբարձիչով մեծ բեռնատար տրանսպորտային միջոց, առնվազն 18 տ տարողությամբ, 4 բեռնատար, 2 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	8	250,000	2,000.0
2.6	Տեխնիկական սպասարկող անձնակազմի տեղափոխում՝ նախատեսված միջինում 30 անձի տեղափոխության համար, 6 մարդատար մեքենա, 7 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	42	12,000	504.0
2.7	Տեխնիկական սպասարկող անձնակազմի սննդի ապահովում, միջինը 30 մարդ, 7 օր	մարդ/օր	210	5,000	1,050.0
3	**Նկարահանման հատուկ տեխնիկայի ապահովում և սպասարկում** Տեսախցիկների լրակազմ՝ 15 հատ, եռոտանի՝ 12 հատ, օբյեկտիվ՝ 15 հատ, հեռուստատեսային ռելս՝ 1 հատ, ռոնին՝ 2 հատ, հեռուստատեսային կռունկ՝ 1 հատ, նկարահանող սարք (սարդ)՝ 1 հատ, մոնիտոր՝ 9 հատ, FPV դրոն՝ 1 հատ, ներքին կապի համակարգ՝ 1 հատ, ֆոկուս ֆոլոու՝ 2 հատ	հատ	1	1,800,000	**1,800.0**
4	Բրենդավորում (բեմի բաներներով ու սև կտորով քողարկման համար)	հատ	1	3,000,000	**3,000.0**
5	Ստեղծագործական անձնակազմի սննդի ապահովում՝ միջինը 25 մարդ, 2 օր	մարդ	50	5,000	**250.0**
	III.Համերգային նախագիծ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում				**109,897.9**
1	**Ստեղծագործական և ադմինիստրատիվ անձնակազմի ծառայություններ**				**32,801.2**
1.1	Նվագախումբ (70 մարդ)	հատ	1	8,500,000	8,500.0
1.2	Երաժշտական գործիքների տեղափոխում	հատ	1	500,000	500.0
1.3	9 երգերի նոտագրում	հատ	1	2,700,000	2,700.0
1.4	Դիրիժորի հոնորար	հատ	1	2,000,000	2,000.0
1.5	Երգչուհի Սոնա Ռուբենյանի ելույթ	հատ	1	600,000	600.0
1.6	Երգչուհի Իվետա Մուկուչյանի ելույթ	հատ	1	1,170,000	1,170.0
1.7	Երգիչ Էրիկ Կարապետյանի ելույթ	հատ	1	1,170,000	1,170.0
1.8	«Գարիկ Պապոյան ու Սոնա Ռուբենյան»	հատ	1	2,100,000	2,100.0
1.9	Երգչուհի Մաշա Մնջոյանի ելույթ	հատ	1	600,000	600.0
1.10	Երգչուհի Բրյունետի ելույթ	հատ	1	1,170,000	1,170.0
1.11	«Նեմրա» խմբի ելույթ	հատ	1	1,170,000	1,170.0
1.12	Երգչուհի Ժակլին Բաղդասարյանի ծախսեր, որից՝				2,271.9

	Տրգչուհի Ժակլին Բաղդասարյանի ելույթ				
1.12.2	ավիատոմս՝ Փարիզ-Երևան-Փարիզ (համաձայն << հարկային օրենսգրքի ներառված է եկամտային հարկը)	հատ	1	1,378,100	1,378.1
1.12.3	կեցություն Երևանում՝ 4 օր(համաձայն << հարկային օրենսգրքի ներառված է եկամտային հարկը)	հատ	1	562,500	562.5
1.12.4	ուղևորափոխադրում՝ Երևան-Արմավիր-Երևան (համաձայն << հարկային օրենսգրքի ներառված է եկամտային հարկը)	հատ	1	300,000	300.0
1.13	«Ռեինկարնացիա» խմբի ելույթ	հատ	1	31,250	31.3
1.14	Բեմադրող ռեժիսոր	հատ	1	6,000,000	6,000.0
1.15	Համերգային ծրագրի հաղորդավար	հատ	1	1,100,000	1,100.0
1.16	DJ ծառայություն (ներառյալ տեղափոխման գծով տրանսպորտային ծախսեր)	հատ	2	400,000	800.0
1.17	Ադմինիստրատիվ անձնակազմ	հատ	1	400,000	400.0
2	**LED էկրանի, լուսային սարքավորումների,ձայնային ապահովման, կոնստրուկցիաների, բեմի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի ծառայություններ**	հատ	4	137,333	549.3
2.1	*ԼԷԴ էկրան* Լեդ էկրան 3.9 մմ կետայնությամբ, նախատեսված դրսում աշխատելու համար՝ 140 քմ, լեդ էկրանների կառավարման համակարգ Comander 4k՝ 1 հատ	հատ	1	8,280,000	**63,285.6** 8,280.0
2.2	*Ձայնային սարքավորումներ* ձայնային համակարգ Sound System Mayer sound Lion՝ 40 հատ, ձայնային համակարգ Sound sysytem Mayer sound HP 700՝ 20 հատ, ձայնային համակարգ Sound System Adamson M212՝ 24 հատ, խոսափող լարային գործիքների համար set remic՝ 42 հատ, խոսափող երաժշտական գործիքների համար set DPI՝ 46 հատ, խոսափող երաժշտական գործիքների համար Microphone set Accent՝ 12 հատ, կիթառի համար նախատեսված բարձրախոս guitar cube՝ 2 հատ, ձայնի կառավարման համակարգ Sound Mixer Alen&Heat Dlive S5000՝ 2 հատ, ձայնային սարքավորման լրակազմ Sound backline՝ 1 հատ	հատ	1	20,390,400	20,390.4
2.3	*Լուսային սարքավորումներ* լուսատու սարք, Fineart Fine 2000L spot՝ 8 հատ, լուսատու սարք Fineart Fine 450 Beam՝ 48 հատ, լուսատու սարք Fineart Fine 1200C strobe՝ 62 հատ, լոսատու սարք LightSky Pearl Wash՝ 56 հատ, լուսատու սարք PR lighting Led bar RGBW՝ 48 հատ, լուսատու սարք PR lighting Xled 2007՝ 52 հատ, լուսատու սարք Willeda COB blinder 150 ww՝ 48 հատ, լոյսերի կառավարման համակարգ Light control MA2 Full size՝ 1 հատ, լոյսերի կառավարման համակարգի արտաքին սարք MA NPU՝ 1 հատ, ծխի ապարատ՝ 4 հատ	հատ	1	7,764,000	7,764.0
4	*Ալյումինե կոնստրուկցիաներ* ալյումինե կոնստրուկցիա ծածկով, 18*14*13՝ 1 հատ. բեմի մոդուլներ՝ 312 քմ, էեկտրական ճախարակ Chain hoists (motor)՝ 38 հատ, մետաղական հյուսվածքներով կոնստրուկցիա՝ 1 հատ, ալյումինե կոնտրուկցիա՝ 1 հատ, ծանրոցներ՝ անվտանգության և հավասարակշռության համար՝ 26 հատ	հատ	1	21,871,200	21,871.2
	Տեխնիկական սարքավորումների տեղափոխում՝ Երևան-Արմավիր-Երևան, ամբարձիչով մեծ բեռնատար տրանսպորտային միջոց, առնվազն 18 տ տարողությամբ, 6 բեռնատար, 2 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	12	275,000	3,300.0
	Տեխնիկական սպասարկող անձնակազմի տեղափոխում՝ նախատեսված միջինը 30 անձի տեղափոխության համար, 6 մարդատար մեքենա, 7 օր, օրական 1 երկկողմանի երթ	երթ	42	15,000	630.0

2.7	Տեխնիկական սպասարկող անձնակազմի սննդի ապահովում, միջինը 30 մարդ, 7 օր	մարդ/օր	210	5,000	1,050.0
3	LED էկրաններին ցուցադրելու համար թեմատիկ կոնտենտի պատրաստում	հատ	1	1,111,111	**1,111.1**
4	Բրենդավորում (բեմի բաներներով ու սև կտորով քողարկման համար)	հատ	1	7,750,000	**7,750.0**
5	Բեմական հատուկ էֆեկտների ապահովում	հատ	1	4,200,000	**4,200.0**
6	Նկարահանման ազդանշանի հաղորդման նպատակով արբանյակային կայանի վարձակալություն	հատ	1	750,000	**750.0**
	IY.Գովազդային և տպագրական, առաջխաղացման կազմակերպման ծառայություններ				**10,820.0**
1	Տպագրական նյութերի դիզայն	հատ	1	600,000	600.0
2	Տպագրություն (բեյջեր, բուկլետներ, ռոլափեր, ցուցանակներ, սերտիֆիկատներ, անցագրեր և այլն)	հատ	1	1,815,000	1,815.0
3	Արտաքին գովազդ (Երևանում և ՀՀ մարզերում)	հատ	1	3,165,000	3,165.0
4	Սոցիալական ցանցերում կարճ հոլովակների (reel) պատրաստում, 10 հատ, յուր.՝ 40,0 հ. դ.	հատ	1	400,000	400.0
5	Ինֆլուենսերների գծով առաջխաղացման ծախսեր	հատ	1	1,150,000	1,150.0
6	Նախագծի շրջանակներում անոնսների հնչյունավորում՝ 3 հատ, յուր.՝ 40,0 հ. դ.	հատ	1	120,000	120.0
7	Կամավորական անձնակազմի (յուրաքանչյուր քաղաքում միջինը՝ 20 մարդ) սննդի ապահովում	հատ	1	150,000	150.0
8	Արտաշատ քաղաքում հյուրերի (միջինը 80 մարդ) ընդունելություն (ֆուրշեթ)	հատ	1	240,000	240.0
9	Հրազդան քաղաքում հյուրերի (միջինը 80 մարդ) ընդունելություն (ֆուրշեթ)	հատ	1	240,000	240.0
10	Արմավիր քաղաքում հյուրերի (միջինը 80 մարդ) ընդունելություն (ֆուրշեթ)	հատ	1	240,000	240.0
11	Երեք քաղաքներում Ֆեստիվալի մասին պատմող ֆիլմերի պատրաստում (3 ֆիլմ, յուր. 21-25 րոպե տևողությամբ)	հատ	1	2,700,000	2,700.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**259,821.6**
	ԱԱՀ*				**51,964.3**
	ԱՄԲՈՂՋԸ				**311,785.9**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011039097, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
Հեռ. 093072266, 098018834
Գործադիր տնօրեն՝
---------- Հ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«20» «08» 2025 թ
N ՄՇԴ-296 2025 պայմանագր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2025 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատո

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«20» «08» 2025 թ.
N ՄՇԴ-29/2025 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2025 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2025 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2025 թ.-ի թիվ Ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝